

ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐ

ԵՐԳԱՆԱՌՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ

Գրեց

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ

(Շար. տե'ս Բազմ. 1958, թ. 6-7, էջ 150)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

(Գործողությունը կը կատարուի Արտաշատի արքայական ապարանքին մէջ, Արաքս գետի ափին. ձախ կողմը խորան մը, ծածկուած ասեղնագործ վարագոյնով մը. բեմին աջ կողմը կայ Բագաւորական ոսկեղէն գահը. բեմը բացուելուն՝ երկու հանդիպակաց դռներուն առջեւ կանգնած են երկու պահակներ նիզակազէն եւ զինուորական տարագով) :

ՏԵՍԻԼ Ա.

ՀՐԱՁ. - (Կեցած դրան աջ կողմը) Այս զիշերն ալ թափառեցաւ... :

ՊԵՐՃ. - (Դուռին միւս կողմը) Այո՛, երեք անգամ... :

ՀՐԱՁ. - Լաւագոյն բախտի մը արժանի էր, բայց իր ապստամբ եւ օտարամոլ նախարարներու երեսէն ամէնէն ապերժանիկն եղաւ :

ՊԵՐՃ. - Հրաչեայ, քեզի բան մը ըսեմ. մեր քաջասիրտ թագաւորը հոգեկան ծանր դրաղանքներով կը տառապի : Կը վախճամ որ խելագարի :

ՀՐԱՁ. - Պերճ, ես ալ այդ նախադրացումը ունիմ. երանի թէ խարուէի... :

ՊԵՐՃ. - Փառանձեմ թագուհին որ աստղահամալուծեան եւ երազահանութեան կը հաւատայ, շատ անգամ փորձեր է անոնց ձեռքով թագաւորին ծածուկ վիշտը իմանալ, սակայն անօգուտ. կարծես թէ մէկը կայ որ թագաւորին կոկորդը կը սեղմէ :

ՀՐԱՁ. - Դիտեցի՞ր, Պերճ, որ կարծես թէ այս վերջին օրերս թագաւորը ուրուականներէ շրջապատուած է : Մերթ սուրը քաջած՝ անոնց հետ կը պայքարի, մերթ կցկտուր աղաղակներ կ'արձակէ. սիրտս կտոր կտոր կ'ըլլայ... :

ՊԵՐՃ. - Միտքը ուրուականներու տեսիլներէն այնչափ տանջուած է որ կը կարծէ թէ մենք ամէն օր զիշերուան ժամերուն այստեղ կանգնելով՝ զինքը պաշտպանած կ'ըլլանք :

ՀՐԱՁ. - Այո՛, պէտք է հսկենք, իբրեւ հաւատարիմ շուններ :

ՊԵՐՃ. - Հրաչեայ, ըսիր թէ մեր արքան կցկտուր խօսքեր կ'արտասանէ. ուսկի՞ց իմացար :

ՀՐԱՁ. - Փառանձեմի նախնիներէն : Անոնք կը պատմեն որ երբ սուրը կը քաշէ՝ այս սրտակեղէք աղաղակը կ'արձակէ. « Գնէ՛լ, որդեակ իմ Գնէ՛լ, կոկորդս մի՛ խեղդեր... » : Նախնիները կ'ըսեն թէ երբ Փառանձեմ այդ աղաղակը կը լսէ՝ տրոմեկու տեղ՝ կը հրճուի :

ՊԵՐՃ. - Սիւնեաց աղջիկը որձաքարէ սիրտ ունի :

ՀՐԱՁ. - Ուրիշ աղաղակ մըն ալ որ ստէպ կը լսեն՝ աս է. « քննեցի դաւաճաններու դորձերը, եւ սիկարեաններս մէկ ակնարկիս կը սպասեն՝ զանոնք ձերբակալելու համար » :

ՊԵՐՃ. - Մեր պահականոցը քաջուելու ժամը հասած է, թագաւորը իր խոռվայ զօրէնքն արթննալու վրայ է : (Հագիւ այս խօսքերը վերջացած, բեմին ետեւէն կը լսուի աղմուկ եւ աղաղակ) Այրենք Արշակ թագաւորին ապստամբ նախարարներուն ապարանքները : Պաշարեցէք զանոնք ամէն կողմէն, անոնցմէ մէկ հատ իսկ պէտք չէ կանգուն մնայ :

ՀՐԱՁ. - Արշակաւանի կոյտորածէն փախած սիկարեաններն են, որ իրենց վրէժի ծարաւը կ'ուզեն յաղեցնել : (Բեմին ետեւը աղմուկը հետզհետէ կը զօրանայ, որոշապէս կը լսուին այս խօսքերը) Մա՛հ Արշակ թագաւորի թշնամիներուն :

բնաջնջեցէ՛ք Հայր Մարգարեանի բոլոր սերունդը :

ՊԵՐՃ. - Կատաղի յեղափոխութեան մը աղղանչանն է : Ժողովուրդին ատելութիւնը լարուած է ամէնէն աւելի Հայր Մարգարեանի դէմ. ան է չարիքներու արմատը :

ՁԱՅՆ ՄԸ. - Հայր Մարգարեան մեր ձեռքերուն մէջն է... :

ԽՈՒԼ ՁԱՅՆ ՄԸ. - Դաշոյնը փոքրն մէջ խոր խոթեցէք :

ՀՐԱՁ. - Անհեթեթ Բագուին ձայնն է. այդ հայրենասէր Մամիկոնեանը դիւցաղի սիրտ ունի, բայց քիչ մը փախուկ է : (Սիկարեաններու մէջ շփոթութիւն մը կը տեսնուի. բեմի միւս կողմէն կը լսուի զինուորական համալսարանի ֆայլերը : Բագու կ'աղաղակէ) Օ՛հ, առա՛ջ իմ սուսերամբերկ քաղաք, մէկ սիկարեանի դիւտն փոխարէն ձեզի կը խոտանամ տիկ մը դողթան զինի... :

ՍԻԿԱՐԵԱՆՆԵՐՈՒ ՊԵՏԸ. - Փախէ՛ք, փախէ՛ք, դեռ աւելի հեռու փախէ՛ք... փախէ՛ք, դեռ աւելի հեռու փախէ՛ք :

ՊԵՐՃ. - Անոնք աներկիւզ մարդիկ են, կատաղի, կոտորող, ջարդող... (Կը լսուին փողի եւ քմբուկի ձայները) :

ՀՐԱՁ. - Ահա թագաւորական փողերուն ձայները, արքան կը մօտենայ, մեկնինք : (Դուրս կ'ելլեն բեմի աջակողմեան դռնէն) :

ՏԵՍԻԼ Բ.

(Ձախ կողմէն կը մտնէ Արշակ Բագաւորը, ետեւէն սեմեկապետը. Բագաւորը կը բազմի արքայական աթոռին վրայ, շատ մտախոհ) :

ԱՐՇԱԿ. - Իմ աչքերուն առջեւ կատարուած աղմկալից ցոյցը իմ ապստամբ նախարարներուն դէմ, փայլուն ապագայն է իմ ձեռակերտ Արշակաւանի զօրեղ ցոյցն : (Կ'իջնէ գահէն եւ կու աղղեցութեան : Կ'իջնէ գահէն եւ կու գայ բեմին մէջտեղը) Ինչո՞ւ համար իմ անունս կապեցի չարագործներու այդ բռնակարանին հետ : (Կը փախէ) Կ'ուզեմ որ

բոլորիդ իմ հայր աշխարհն ասոր պատճառը դիտնայ : Հայ Արշակունի թագաւորին դերը Հայաստանի մէջ՝ է մահու եւ կենաց իշխանութիւն ունենալ իր հպատակներուն վրայ. զսպել եւ բնաջնջել իր ապստամբ նախարարներուն բանակները, որոնք պատճառ են երկրին աւանդական տկարութեան եւ Հայ Ժողովուրդին համաճանկութեան : Կ'ուզեմ ստեղծել զազաւորապաշտ հայրենիք մը, մէկ եւ զօրաւոր, միացեալ մականիս տակ. հիմնեցի Արշակաւանը, մեծագոր աղնուականութիւնը անդադարձաւ իր գոյութեան ըստ պաշտօնող վտանգը, եւ միացեալ ուժերով կործանեցին զայն, բնակիչները ջարդեցին, միայն ծծկեր մահուկներու խնայեցին Ներսէս Հայրապետի միջնորդութեամբ... :

ՏԵՍԻԼ Գ.

(Առաջինները եւ Հրաչեայ)

ՀՐԱՁ. - (Ներս կը մտնէ, առանց նիզակի, խոնարհելով Բագաւորին առջեւ) Տէր արքայ, ապարապետը հասած է արքունիք եւ կ'ուզէ անյապաղ թագաւորի դերակրանալ :

ԱՐՇԱԿ. - Շուտով ներս հրաւիրէ, իմ անմահ ապարապետս :

ՀՐԱՁ. - Ձեր հրամանը զլիւս վրայ, տէր արքայ : (Կը խոնարհի ու կը մեկնի) :

ԱՐՇԱԿ. - (Ուրախութեամբ) Երբ վաւեր, Արշակունեաց զահուն խնամակալը քովս է, բոլոր ցաւերս կը փարատին, Մամիկոնեան առիւծը քաջութեան աւելի կը ներարկէ թուլացած երակներուս մէջ :

ՏԵՍԻԼ Դ.

(Արշակ, Վասակ եւ սեմեկապետը)

ՎԱՍԱԿ. - (Ներս կը մտնէ, զինուորական տարագներով, եւ Մամիկոնեանի սահաւարտով) Ողջ լեր, արքայ քաջ, ռազմազաշտն կը վերադառնամ բերկրառիթ լուրով : Քու անձնուէր եւ տիրասէր բա-

նախնեքդ զազանաբար կուռելով, քալեցին յաղթանակէ յաղթանակ. նաւասարդի զեղեցիկ առաւօտ մը, Մշոյ Ս. Կարապետը օգնութեան կանչելով խուժեցինք Դեհկան զօրապետին անհամար զուգերուն վրայ. իմ իսկ ձեռքովս սպաննեցի Դեհկան նահապետը, իսկ պարսկական զուգերը շփոթութեան մատնուած, փախան Մերութան Սիւնիի հետ:

ԱՐՇԱԿ. — Սիրելի Վասակ, Դեհկան նահապետը Մամիկոնեաններուդ ազգական է. ձեռքդ ի՞նչպէս առաջ զնաց անոր արեւը խաւարեցնելու...:

ՎԱՍԱԿ. — (Անխոյ) Ճիշտ ասոր համար է որ սուրս անոր սրտին մէջ մխելով խաւարեցուցի այդ արեւը. իմ սրտին մէջ ազգական կամ բարեկամ տեղ չունի. ով որ սուր կը քաշէ հայրենիքիս եւ անոր թագաւորին դէմ, ինծի ոխերիմ թշնամի է. այս է Մամիկոնեանի նուիրական պարտականութիւնը:

ԱՐՇԱԿ. — (Խանդավառաւ) Զուր տեղ չէ ուրեմն որ նախնիքս Մամիկոնեաններդ նկատած են Արշակունեաց թագաւորութեան զօրաւոր նեցուկը:

ՎԱՍԱԿ. — (Ոգեւորուած) Տէր արքայ, ուրիշ փայլուն յաղթանակ մըն ալ պիտի աւետեմ քեզի: Քու անխոնջ զուգերդ նաւասարդեան այդ վսեմ յաղթանակէն վերջ ստիպեցին զիս որ զիրենք առաջնորդեմ Ատրպատական, ուր Սուրէն պահաւ պարսկական բանակներով եւ փրկելով հասած էր Մերութանի առաջնորդութեամբ: Ընդհարումը եղաւ վայրագ եւ անգութ. մեր զուգերը հայրենիքի եւ թագաւորի սիրով վառուած ճեղքեցին եւ ցրուեցին թշնամիին թեւերը, ու ես զարկի զգետնեցի Սուրէն զօրավարը:

ԱՐՇԱԿ. — (Դժկամակութեամբ) Սուրէն... իմ մօտաւոր ազգականն է:

ՎԱՍԱԿ. — (Վնասկանութեամբ) Այո՛, տէր արքայ, ձեր մօտաւոր բայց դաւաճան ազգականը. այն Սուրէնը՝ որ չխնայեց իր մերձաւոր ազգականին. արիւնը արիւնով կը քաւուր:

ԱՐՇԱԿ. — (Կիջնէ գահէն եւ Վասակի

կը մօտենայ). Եկուր իմ աննման սպարապետս, եկուր որ ողջապահեմ զքեզ: (Կը համբուրէ անոր ճակատը) Վասակ, իմ թագիս զեղեցկագոյն զոհարը... (Կ'երթայ կը բազմի գահուն վրայ):

ՎԱՍԱԿ. — Այս առաւօտեան ազմկալից ցոյցը աւելի փայլ տուաւ մեր երկու յաղթանակներուն:

ԱՐՇԱԿ. — (Յուզուած) Հայր Մարդպետի վրայ կը դողամ. ի՞նչ եղաւ այդ հաւատարիմ ծառաս:

ՎԱՍԱԿ. — (Ձայրացած) Հաւատարիմ ծառայ... Ո՛չ, տէր արքայ: Այսօր ամէն մարդ զիտէ թէ Հայր Մարդպետները Արշակունի թագաւորներուն հար հողիներն են եւ անոնց զգացումները թունաւորողները: Տիրան թագաւոր հայրդ անոնց խորհուրդով ջարդել տուաւ Ռշտունեաց եւ Արծրունեաց նախարարական ցեղերը. նոյնը դուք ըրիք անոնց հար խորհուրդներով, դործեցիր դիւանագիտական մեծ սխալներ՝ Կամսարականներու ցեղը ջրնջելով:

ԱՐՇԱԿ. — Սիրտդ բացիր, Վասակ, ես քու անկեղծ ու շիտակ նկարագիրդ կը սիրեմ: Ոչ մէկ համարձակ լեզու հետս այդպէս խօսած չէր:

ՎԱՍԱԿ. — Տէր արքայ, քանի որ ինծի այսքան համարձակութիւն կու տաս, պէտք է որ պարզեմ քու առջեւ մեր երկրին տխուր համայնապատկերը: Գիտցիր որ մինչեւ հիմա մեր անպարտելի բանակները միայն առանձին երեսուն յաղթանակներ տարին պարսկական անհամար զօրքերուն դէմ. ասկից վերջ կարելի պիտի չըլլայ նոյնպէս շարունակել. պէտք ունինք հոռմէական լեզէոններու օգնութեան:

ԱՐՇԱԿ. — Պէտք է յամառինք մեր մաքառումին մէջ, դափնին յամառինն է:

ՎԱՍԱԿ. — Այո՛, տէր արքայ, յամառինք, բայց ի՞նչ ոյժի վրայ կոթնած: Մեզմէ ոչ միայն բոլոր արուարձանեայ նիզակակիցները թօթափել վճռած են, այլ տոգոհ նախարարներն ալ կան, որ կը մերժեն իրենց զաւակները զինուորագրել:

Մասիսի գայլերէն կը մնայ բանակներ կազմել:

ԱՐՇԱԿ. — Ուրեմն ամէն յոյս կորսուած է...:

ՎԱՍԱԿ. — Այն օրէն, տէր արքայ, որ սուրբ Ներսէս Պարթեւը, Հայաստանի պահպան հրեշտակը զքեզ անիծելով արքունիքէն հեռացաւ, այդ օրէն սկսաւ սեւ ճակատապիւրդ ուրուագծուիլ: Դու պէտք է հաշտուիս Հայրապետին հետ, թերեւս ան կարենայ գերադոյն փորձով մը իրաւարար ըլլալ քու եւ մեր նիզակակից բըղէխներուն մէջ, ապա թէ ոչ ամէն յոյս կորսուած է:

ԱՐՇԱԿ. — (Ենթ շեշտով մը) Ես ի՞նչ երեսով կրնամ ներկայանալ այդ սուրբ մարդուն: Վասակ, ես ամէն դիւշեր անով ու դողով կ'ապրիմ: Անոր ներկայանալու քաջութիւնը չունիմ. դու որ իմ անուցիւս քաջութիւնը չունիմ. դու որ իմ անուցիւս քաջութիւնը որ արքունիքը անբիծ Հայրապետը որ արքունիքը կոխէ: Ի՞նչ մեղք ունի Հայ Ժողովուրդը եթէ իր թագաւորը ոճիրներով ծանրաբեռնուած է: ... Մեկնէ, Վասակ, դու ես Հայաստանի փրկիչը: Դու միայն կըրնաս փարատել անոր կասկածները. նա ջերմ սիրով կը սիրէ Մամիկոնեան տունը:

ՎԱՍԱԿ. — Կը հպատակիմ արքունական պատուէրին, արդէն Հայրապետը Արտաշատ կը գտնուի, ուր եկեր է տեսնելու յաղթական բանակիս տողանցքը եւ օրհնեալ յաղթական բանակիս տողանցքը եւ թէ կալու զինուորներս: Տէր արքայ, եթէ կարենամ փրկել Հայաստանը եւ ձեր գլուխը, այդ օրը կեանքիս երջանկագոյնը պիտի աշխատեմ... (Վասակ գլուխը ծռելով կը մեկնի, Արշակ կեցնելով զինքը) Ըսէ ս. Հայրապետին որ թող մոռնայ դորձած ոճիրներս եւ յիշէ միայն թագաւորութեանս այն երջանիկ տարիները, երբ իրարու ձեռք ձեռքի տուած այնպիսի փայլուն ջրջան մը ստեղծեցինք Հայաստանի համար, որուն վրայ մերձաւորներն ու հեռաւորները նախանձով կը նայէին:

ՎԱՍԱԿ. — (Կարեկցաբար) Կայ ոճիր մը որ, Տէր արքայ, երբեք պիտի չմոռնայ, որուն համար ամէն օր անմխիթար

սուգի մէջ է եւ ամէն օր տաք արցունքներ կը թափէ:

ԱՐՇԱԿ. — (ցնցուելով) Ո՞րն է այդ ոճիրը (ձայնը կոկորդին մէջ կը խեղդուի): ՎԱՍԱԿ. — (ուժգին կը պոռկայ) Անմեղ Գնէլին ողբերգական մահը...:

ԱՐՇԱԿ. — (գահէն վեր ցատկելով) Աստուծոյ սիրոյն համար, մի՛ յիշեցնէր ինձ այդ սարսափազգեցիկ անունը... (ջաշիւ պրկումներ կ'ունենայ, կը քալկանայ, կ'իյնայ գահէն, սենեկապետին սուրը կը խլէ եւ կը փորձէ անձնասպան ըլլալ. վասակ կը փութայ ձեռքէն սուրը առնելու):

ՎԱՍԱԿ. — Սենեկապետ, ներս տանինք ուշակորոյս թագաւորը: Դժբախտութեան մէջ ալ մեծ է: (Ներս կը տանին Արշակը. վասակ կը վերադառնայ բեմ, խռոված վեր վար փախելով):

ՏԵՍԻԼ Դ.

ՎԱՍԱԿ. — (առանձին. ներսէն կը լսուի կանացի ձայն մը) Դժխոյ Փառանձեմի ձայնն է... այդ քաջ եւ խիզախ հայուհին պատմութեան մէջ անջնջելի հետք պիտի թողու. ուրախ է նա արքային տառապանքներով, այսպէս կը լուծէ Գնէլի վրէժը: (Կը լսուի ոտնաձայն մը) Ի՞նչն է արդեօք...:

ՏԵՍԻԼ Ե.

(Վասակ, Պերն, Փառանձեմ)

ՊԵՐՆ. — (կը մտնէ խոնարհելով) Սպարապետ, Հայոց Մեծաց թագուհին կ'ուզէ քեզ տեսնել:

ՎԱՍԱԿ. — Պատրաստ եմ: (Պերն կը մեկնի խոնարհելով) Լաւ նշան, թագաւորը զգաստացած է:

ՏԵՍԻԼ Զ.

ՓԱՌԱՆԶ. — (ներս կը մտնէ շփեղ հագուստներով զարդարուած) Ողջ լեւր, յաղթական...:

ՎԱՍԱԿ. — Արշակունի տիկին, դժխոյ

«Սէդ Մասիսն ի սեր հնչեն շնորհներ,
Եւ ծածանի դրօշ խիզախ Արշակի.
Կեցցէ քաջն Արշակ յաղթող թաղաւոր.
Ի մահ մատնիչներ, կեցցէ Փառանձեմ:
Յաղթական սուրի շող փայլակներէն.
Անկցի թշնամին, անմահ հայրենիք:
Կեցցէ քաջ արքայ. Կեցցէ քաջ Վասակ»:

ՎԱՍԱԿ. — (ներս կը մտնէ ամէնուն
խոնարհութիւն ընկով) Արքայ քաջ, յա-
ւիտեան կեաց. յաղթական բանակդ Բա-
սենի ճակատամարտին մէջ ընկճեց սա-
սանեան բանակները. մերիններուն կը
հրամայէր եղբայրս Բաղոս:

ՆԵՐՍԷՍ. — Ո՛ր է այդ Մամիկոնեանը,
կրօնքի եւ հայրենիքի անվկանդ ախոյեա-
նը:

ՎԱՍԱԿ. — Հիմա, սուրբ հայրապետ,
անոր ճակատը պսակուած է անթառամ
պսակով:

ՓԱՌԱՆՁ. — (տխրագին) Մեռա՞ւ հա-
րադործ մարդկանին սպանիչը:

ԱՐՇԱԿ. — Ի՞նչպէս ինկաւ, քաջերս,
մեր քաջը:

ՎԱՍԱԿ (պաղարիւն) Տէր արքայ, Բա-
ղոս Շապուհի փրկի սպաննելէ վերջ ա-
նոր տակը վը մնայ:

ԱՐՇԱԿ. — Եթէ զինուորական մը չըլ-
լար՝ ընդհանուր սուգ կը պատուիրէի:

ԱՐՇԱԿ. — Ահա, տէր արքայ, այսպի-
սիներով է որ կը ստեղծուի ազատ հայ-
րենիք:

ՎԱՍԱԿ. — Գնա իմ անպարտելի Վա-
սակ, դնա հանգչէ փառքիդ դափնիններուն
վրայ:

ՎԱՍԱԿ. — Կը հնազանդիմ արքունի
բարձր հրամանին: (Կը մեկնի սուսերա-
մերկ. նոյնպէս խոնարհ):

ԱՐՇԱԿ. — Կարծես թէ Մասիսի սարէն
անմահաբար շունչ մը մտաւ մէջս: Եր-
թանք սուրբ հայրապետ, դուք օրհնեցէ՛ք
մեր անմահ մարտիկները եւ իսկ փառքի
չքանչաններ բաժնեմ արժանաւորներուն:
Իսկ դու, Փառանձեմ, բա՛ց արքունի դան-
ձարանը, սփռէ անոնց ոսկի, արծաթ:
Այս զիշեր թող Արտաշատ լոյսերու մէջ
շողշողայ:

Վ ա ր ա գ ո յ ր

(Շարունակելի)

ԸՆԴԴԷՄ ՄՈՌԱՅՈՒԹԵԱՆ

Ջրրասոյդ քաղաքներն հինաւորց անցեալին,
Կ'ըսուի թէ ալքերէն դէպի վեր թրթրոուն
Կը հնչեն մոլորական նըւագերդ մը թաքուն:
Ալիքներն երբ լուսնէն դէպի վեր կը քաշուին:

Սա՛պէս իմ հոգւոյս մէջ, խորանդունդ ովկէան,
Կը հանդէի թմրիրով աշխարհ մը ջրամոյն:
Ո՛վ յուշ դու փոթորիկէ ալիքները ծովուն
Մի՛ դուցէ՛ դանդակները մոռնան հընչելու:

Թրգմ. Անգլիերէնէ

ԱՐՇԱԼՈՅՍ

Չեմ ընծայեր ես ձեզի՝
Աշնան դալուկ տերեւներ.
Լաց մը անդուկ կաթիլթող՝
Անհրապոյր, դո՛ւրչ ամպեր.
Այլ ծաղիկներ կ'ընծայեմ՝
Տարաշխարհիկ, անթառամ,
Եւ հողիւն սոսկ վայել՝
Ճառագայթներ, ջինջ երկի՛նք:
Վէրքը սրտիս՝ կը քալեմ
Դէպի ո՛ւխտս իմ՝ շողարձակ.
Եւ վէրքս նոր՝ վէրքիս վրան՝
Վարդն է, վարդի՛ն վերան հին.
Այս դարունին մէջ անա՛նց՝
Ժրպիտներով, վարդերով
Կու դամ ձեզի ընդառաջ.
Ես Արշալոյսն եմ պայծառ՝
Սուգին զիմաց անսահման:

(Նարագոյն երգեր) ՀՐԱԶ ՔԱԶԱՐԵՆՑ

ԱՇՆԱՆԱՅԻՆ

Գունատ մարմանդներն ու արտերը դօս
Առաւօտն հիմա եղեամով կ'օծէ,
Ցօղի բեհեղով — արեւու փոխան —
Մանուշակներու թերթերն կը սքօղէ:

Ու հորիզոնի անհաս ոլորտին՝
Ալ չի արիւնիւր հըրաչէկ արփին
Կարօտի ոգին է որ տաղտկացած
Յաւէտ վը գըծէ միեւնոյն ուղին:

Քամին միալար թախիծը կ'ողբայ
Կ'աւետէ կարծես սարսուռը մահուան.
Ու իր խօլ թափէն ծեծուած սաղարթներն
Կը յիշեն կեանքի զգուանքն ափսոսով...:

Մանեակի հանդոյն երամակն յետին
Հեռացաւ, կեանքի վերջին շողն իր հետ...
Որ դարձեալ բերէ զիւ ճիւճիւններով
Երբոր հոգն հագնի զմրուխտէ ըղբատ:

Արեւի, 9 Դեկտ. 1956 ՅԱԿՈԲ ՃԵԼԱԼԵԱՆ
Նախկին սան՝ Մուրադ-Ռափ. վրժ. Ի